



**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» փետրվարի 2018 թ.
ք.Գավառ

N 84-Ա

ԱՐԹՈՒՐ ՖՐՈՒՆԶԵԻ ԴԱՎԹՅԱՆԻ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի «դ» կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2002 թվականի սեպտեմբերի 19-ի N 1797-Ն որոշմամբ հաստատված Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի կանոնադրության 23-րդ կետի «ե» ենթակետը ու Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի /ծածկագիր՝ 64-2.3-27/ թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2018 թվականի փետրվարի 9-ի N 7 որոշումը, եզրակացությունը ու Արթուր Ֆրունզեի Դավթյանի դիմումը՝

հրամայում եմ՝

1. Արթուր Ֆրունզեի Դավթյանին 2018 թվականի փետրվարի 13-ից, երեք ամիս փորձաշրջանով նշանակել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի Վարդենիսի սոցիալական աջակցության տարածքային գործակալության պետի /ծածկագիր՝ 64-2.3-27/ պաշտոնում:

Աշխատավարձը և վարձատրության հետ կապված այլ հարաբերություններ սահմանվում են «Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթներով:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2018 թվականի փետրվարի 13-ից:

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ



ՍԵՎԱԿ ԽԼՂԱԹՅԱՆ